

**ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՆՈՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻ**

27.04.2020 19:57



ՀՀ փաստաբանների պալատը բարերար, Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի, ՀՀ փաստաբանների պալատի պատվավոր անդամ Ռայմոն Եզեզեյանի աջակցությամբ իրականացնում է նոր սոցիալական ծրագիր:

Բարերարը ՀՀ փաստաբանների պալատին նվիրաբերություն է կատարել (**այսուհետ՝ Նվիրաբերություն**) Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսային համավարակի (COVID-19) կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության ընթացքում փաստաբաններին նյութական և/կամ այլ օժանդակություն ցուցաբերելու նպատակով:

Նվիրաբերությունը փաստաբանների միջև կբաշխվի հետևյալ երկու եղանակով՝

- մեկ (1) ամսվա անդամավճարի գումարի մարում (**այսուհետ՝ Անդամավճարի մարում**)՝ շուրջ **709** փաստաբանի համար.
- **10.000 (տասը հազար)** ՀՀ դրամի չափով միանվագ անհատույց օգնության տրամադրում (**այսուհետ՝ Միանվագ հատկացում**) շուրջ **425** փաստաբանի:

Մեկ ամսվա անդամավճարների գումարները վճարված կհամարվեն հետևյալ **709 (յոթ հարյուր ինը)** փաստաբանի համար՝

- Հայաստանի Հանրապետության մարզերում բնակվող և մարզերում գործունեություն իրականացնող փաստաբանների (ըստ ցուցակի՝ **504 փաստաբան**, որն ենթակա է ճշգրտման).
- 60-69 տարեկան փաստաբանների (ըստ ցուցակի՝ **205 փաստաբան**)[1]:

Միանվագ հատկացում կտրամադրվի հետևյալ **425 (չորս հարյուր քսանհինգ)** փաստաբանի, այդ թվում՝

- 60-ից բարձր տարիք ունեցող փաստաբանների (**305 փաստաբան** (ըստ ցուցակի քանակը՝ 60-69 տարեկան փաստաբաններ՝ 205, 70-ից բարձր փաստաբաններ՝ 100)).
- փաստաբանի (**120 փաստաբան**), որը՝

- ունի երեք և ավելի անչափահաս երեխա, կամ
- ունի հաշմանդամություն ունեցող երեխա, կամ
- հանդիսանում է անչափահաս երեխայի (երեխաների) միայնակ ծնող, կամ
- ունի 1-ին, 2-րդ կամ 3-րդ կարգի հաշմանդամություն:

Նվիրաբերությունը փաստաբանների միջև արդարացի ու ըստ կարիքի բաշխելու անհրաժեշտությունից ելնելով ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից ընդունվել է համապատասխան կարգ:

Ընդհանուր առմամբ, կարգի հաստատման օրվա դրությամբ կատարված հաշվարկներով, այս սոցիալական ծրագրից կարող են օգտվել շուրջ **1134** փաստաբան:


**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 27.04.2020թ. թիվ 73-Լ որոշումը.**

**Բեռնել «Բարերար Ռայմոն Եզեզեյանի կողմից արտակարգ դրությամբ պայմանավորված հի փաստաբանների պալատին տրամադրած նվիրաբերությունը տնօրինելու վերաբերյալ»**

## Կարգը.

[1] 70-ից բարձր տարիք ունեցող փաստաբաններն ազատված են անդամավճարից:


## Առաջարկվող նորուքյուններ



**27.04.2015** ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՀՈՒՇԱԳԻՐ



**29.04.2015** ՀՀ ՄԱՐԶԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԾԱՎԱԼՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ Է ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎԾԱՐԻ ԿԱՆԽԱՎԾԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ



**10.07.2015** ՄԱՐԶԵՐԻ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՍՏԱՑԵԼ ԵՆ ՌԱՅՄՈՆ ԵԶԵԳԵԼՅԱՆԻ ԹՈՇԱԿԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԸ



**14.12.2015** ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ 80 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ ՇՆՈՐՀՎԵԼՈՒ ԵՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՆԴԱՄԱՎԾԱՐԻ ԿԱՆԽԱՎԾԱՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ

Վերադառնալիք (function() { if (typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0) { updateCommentsCount(window.location.href); } })